ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ՆԻՍՏԻ

Մասնակցությամբ՝

ՀՀ ՏԿԱԻ նախարարության վարչական հսկողության բաժնի մասնագետ — *Ա.Մարտիրոսյանի*

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալներ՝ — *Լ.Մուրադյանի*, *Դ.Սամսոնյանի*, *Մ.Քարտաշյանի*

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ — *Փ.Կարապետյանի*

ՀՀ Արմավիրի մարզի դատախազ — *Ա.Սիմոնյանի*

ՀՀ Ոստիկանության Արմավիրի մարզային վարչության պետ — *Ա.Այվազյանի*

ՀՀ հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարների

ՀՀ Արմավիրի մարզպետարանի ենթակայության առողջապահական կազմակերպությունների ղեկավարների

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների

Լրատվամիջոցների ներկայացուցիչների

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2016թվականի փետրվարի 18-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

/Ա.Ղահրամանյան- ՀՀ Արմավիրի մարզպետ/

2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2015թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

/Ա.Ղահրամանյան-ՀՀ Արմավիրի մարզպետ /

3.Գարնան գյուղատնտեսական նախապատրաստական աշխատանքների մասին

/Ա.Այվազյան - ՀՀ Արմավիրի մարզպետարանի շխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

4.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքներում կատարվող աղբահանության աշխատանքների մասին

/Ա.Այվազյան - ՀՀ Արմավիրի մարզպետարանի շխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/

Օրակարգային առաջին հարցի կապակցությամբ ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը մարզի խորհրդի նիստի մասնակիցների հաստատմանը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2016 թվականի փետրվարի 18-ի նիստի օրակարգը:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ -728 հրամանագրի 1.10 –րդ կետի 13-րդ պարբերությամբ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհուրդը որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի սահմանած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի խորհրդի 2016 թվականի փետրվարի 18-ի նիստի օրակարգը:

Օրակարգային երկրորդ հարցով ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը հանդես եկավ իր 2015 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին հաշվետվությամբ: /հաշվետվությունը կցվում է/:

Մարզպետ Ա.Ղահրամանյանը մասնավորապես անդրադարձավ մարզպետարանի գործունեության կազմակերպման ընդհանուր հարցերին՝ ներկայացնելով տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության, ֆինանսական, արդյունաբերության, ,քաղաքաշինության, բնակարանային և կոմունալ տնտեսության, տրանսպորտի և ճանապարհաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության, հողաշինության և հողօգտագործման, առողջապահության և սոցիալական ապահովության, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության. կրթության, մշակույթի և սպորտի, արտաքին կապերի և տեղեկատվության բնագավառներում իրականացրած աշխատանքները:

Իր խոսքում մարզպետն ընդգծեց,որ 2015 թվականի ընթացքում Արմավիրի մարզում քաղաքական,սոցիալ-տնտեսական իրավիճակը եղել է կայուն: Ըստ նրա՝ ոլորտային ձեռքբերումներն ու հաջողությունները հնարավոր է եղել ապահովել բոլոր պետական կառույցների, տեղական, միջազգային և հասարակական կազմակերպությունների, ՀԼՄ-ների հետ սերտ համագործակցության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի. վարչապետի, նախարարների և այլ գերատեսչությունների ղեկավարների մարզ կատարած այցելությունների և տրված հանձնարարականների արդյունքում: Ամփոփելով զեկույցը մարզպետը նշեց,որ բոլոր բարձրացված հարցերն ու ներկայացված ծրագրերը ներառվել է 2015-2018 միջնաժամկետ ծրագրում:

Մարզպետն անդրադարձավ նաև մարզում սեփական եկամուտների հավաքագրման գործընթացին, փաստելով , որ մի շարք համայնքներ, ինչպիսիք են ք. Վաղարշապատ /Էջմիածին/, ք. Մեծամոր. Տարոնիկ, Ջրարբի, Եղեգնուտ ունեցել են շատ բարձր ցուցանիշներ, իր գոհունակությունը հայտնելով, վերը նշված համայնքների ղեկավարներին՝ գերազանց աշխատանքի համար: Այնուհետև մարզպետն անդրադարձավ 80% -ից ցածր հավաքագրումներ ապահովված համայնքների ղեկավարներին՝ Այգեշատ/Էջմ/, Առատաշեն, Արտիմետ, Ծաղկալանջ, Արևիկ, Նոր Արմավիր, Շենավան, Տանձուտ, Արևադաշտ, Վարդանաշեն, ինչպես նաև 50%-ից ցածր հավաքագրումներ ապահովված համայնքների ղեկավարներին՝ Ամասիա, Նալբանդյան, Ջրաշեն:

Անդրադառնալով վերը նշված տեղեկատվությանը ,մարզպետ Ա.Ղահրամանյանը անընդունելի համարելով նման իրավիճակը առաջարկեց առաջին եռամսյակի ընթացքում կարգավորել նախորդ տարվա ցուցանիշները և ամենայն պատասխանատվությամբ մոտենալ սեփական եկանուտների հավաքագրման գործընթացին:

Օրակարգային երկրորդ հարցի կապակցությամբ՝ գարնան գյուղատնտեսական աշխատանքերի նախապատրաստման ընթացքի մասին զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Արթուր Այվազյանը՝ շեշտելով, որ գարնան նախապատրաստական աշխատանքները մարզպետարանը, մարզի համայնքները, ջրօգտագործողների ընկերությունները և տնտեսվարող գյուղացիական, գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները և ֆերմերները սկսել են դեռևս 2015 թվականի նոյեմբեր-

դեկտեմբեր ամիսներից՝ մարզի զարգացման գերակա ուղղությունները և առաջնահերթ խնդիրները որոշելով և դրանք լուծելու համապատասխան ծրագրեր մշակելով: Ա. Այվազյանը կարևորելով մարզում գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման շարքում ոռոգման համակարգերի մաքրման և վերանորոգման աշխատանքների իրականացումը՝ նա առաջարկեց ոռոգման համակարգը սպասարկողներին և ջրօգտագործողներին առավել կազմակերպված և բարեխղճորեն կատարելու համակարգի կառուցման, մաքրման և վերանորոգման աշխատանքները, որպեսզի հնարավոր լինի արդյունավետ օգտագործել ոռոգման ջուրը և կորուստները հասցվեն մինիմումի: Նա նշեց նաև,որ առաջիկա 10 օրերի ընթացքում մարզպետարանի համապատասխան հանձնաժողովի կողմից կուսումնասիրվի համակարգում տիրող իրավիճակը և միջոցառումների համապատասխան ծրագիր կկազմվի: Անդրադառնալով գյուղմթերքների արտադրությանը՝ գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետը տեղեկացրեց,որ 2016 թվականին մարզի գյուղացիական տնտեսությունները կարող են զբաղվել լոլիկի մեծաքանակ արտադրությամբ, քանի որ մարզպետի կողմից ձեռք է բերվել պայմանավորվածություն մթերող կազմակերպությունների հետ՝ ողջ արտադրանքը մթերելու վերաբերյալ: Ա,Այվազյանը իր խոսքում ընդգծեց նաև, որ ընթացիկ տարում նույնպես շարունակվելու են ՀՀ կառավարության կողմից գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման նպատակով տրամադրվող աջակցության ծրագրերը, որոնց շրջանակում շուկայականից մատչելի գնով մարզին հատկացվել է 6000 տոննա ազոտական պարարտանյութ՝ 1 պարկը 6000 դրամով, 200 տոննա ֆոսֆորական և կալիումական պարարտանյութեր՝ 1 պարկը 7000 դրամով և 550 հազար լիտր դիզելային վառելանյութ՝ 1 լիտրը 280 դրամով: Գարնանացանի աշխատանքները խթանելու նպատակով մարզին հատկացվել է 80 տոննա գարնանացան գարու և 5 տոննա առվույտի սերմացու, որի պահանջարկը ձևավորվել է համայնքների կողմից ներկայացված հայտերի հիման վրա:

Օրակարգային երրորդ հարցի՝ ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում կատարվող աղբահանության աշխատանքների վերաբերյալ Ա.Այվազյանը նշեց,որ մարզպետի կողմից հաստատվել է մարզի վարչական տարածքի 2016թվականի սանիտարական մաքրման սխեման՝ համաձայն որի, մարզի 97 համայնքերում իրականացվում է աղբահանման աշխատանքներ, որից 86 համայնքներ՝ իրենց վարչական տարածքում ունեն առանձնացված աղբավայրեր, իսկ 11 համայնքներում՝ աղբը տեղափոխում են այլ համայնքների վարչական տարածքում գտնվող աղբավայրեր: Աղբահանության

աշխատանքները համայնքերում իրականացվում են հիմնականում համայնքների բյուջեի միջոցների հաշվին: Ա.Այվազյանը փաստեց, որ բոլոր համայնքներում գտնվող աղբավայրերը ցանկապատված չեն՝ բացառությամբ Գեղակերտ համայնքի և առաջարկեց միջոցներ ձեռնարկել աղբավայրերի ցանկապատումը իրականացնելու նպատակով: Նա նշեց նաև,որ կատարված ուսումնասիրությունները փաստում են,որ համայնքներում սանիտարական վիճակը գտնվում է ոչ բարվոք վիճակում և առաջարկեց համայնքների ղեկավարներին իրավիճակը բարելավելու նպատակով անմիջական հսկողության տակ վերցնել համայնքի սանիտարական մաքրման սխեմայով նախատեսված աղբահանության աշխատանքների ժամանակացույցը և կատարվող աշխատանքների որակը, ինչպես նաև լայն բացատրական աշխատանքներ տանել բնակչության հատկապես այն շրջանում, որպեսզի զերծ մնան կենցաղային աղբը ոռոգման մայր, միջտնտեսային և ներտնտեսային ցանցեր, ինչպես նաև համայնքային ճանապարհների եզրերը նետելուց և ըստ անհրաժեշտության՝ կրկնակի անգամ խախտում թույլ տված անձանց ենթարկել պատասխանատվության: Ա.Այվազյանը տեղեկացրեց նաև, որ փետրվարի 22-ից մարզպետի համապատասխան կարգադրությամբ ստեղծված մշտական գործող հանձնաժողովը ստուգայցեր է կազմակերպելու համայնքներում՝ ստուգելով սխեմայով նախատեսված աշխատանքների ընթացքը: Խախտումներ արձանագրելու դեպքում կազմվելու է արձանագրություն և ժամանակ է տրվելու այն վերացնելու համար, իսկ խախտումը կրկնվելու դեպքում համայնքի ղեկավարի գործունեությունը քննարկվելու է հանձնաժողովի նիստում:

Անդրադառնալով օրակարգային հարցին ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը առաջարկեց ՋՕԸ-ների տնօրեններին՝ աջակցել իրենց սպասարկման տարածքի ոռոգման ցանցերի մաքրման աշխատանքներին և միաժամանակ աշխատանքային կարգապահության կոչ արեց համայնքապետերին՝ վստահեցնելով, որ նրանց գործունեությունը շարունակելու է մնալ իր ամենօրյա ուշադրության կենտրոնում: *Մարզպետն անդրադարձավ նաև մարզին հատկացվող պարարտանյութին և դիզ վառելիքին ,նշելով որ դրանց անհրաժեշտ ձեռք բերման չափաքանակները համայնքների ղեկավարները ներկայացնեն նախօրոք և ըստ կարգի, ինչպես նաև մարեն նախկինում ձեռք բերած սերմացուների և պարարտանյութերի պարտքերը: Մարզպետ Ա.Ղահրամանյանը Արմավիրի և Էջմիածնի քաղաքային համայնքների ղեկավարներին հանձնեց Հայաստան Համահայկական Հիմնադրամի*

կողմից տրված Ազգային տուրքի վավերագրերը՝ շնորհակալություն հայտնելով նրանց հիմնադրամի ծրագրին ակտիվ մասնացություն ցուցաբերելու համար:

Օրակարգային հարցերի ու հայտարարությունների ավարտից հետո հանդես եկավ նաև ՀՀ ՏԿԱԻ նախարարության վարչական վերահսկողության բաժնի աշխատակից Արմեն Մարտիրոսյանը: Նա իր խոսքում փաստեց,որ ՀՀ Արմավիրի մարզում ակնառու են բազմաթիվ հաջողությունները, մի շարք ոլորտներում՝ ինչպիսիք են ՏԻՄ- երում վարչական հսկողության ճիշտ և սահմանված ձևաչափով իրականացվող գործընթացը, սեփական եկամուտների հավաքագրման արդյունքները և բազմաթիվ այլ առաջխաղացումներ, որոնք նույնպես շատ ողջունելի է և նշեց,որ ՏԿԱԻ նախարարությունը մշտապես պատրաստ է համագործակցելու և շարունակելու աշխատանք տանել հետագա հաջողությունների համար:

Օրակարգային հարցերի ու հայտարարությունների համապատասխանաբար քննարկման ու ամփոփման ավարտից հետո ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանը մարզի խորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***

Արձ.՝ Մ.Առուշանյան